ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**23 հունվարի 2014 թվականի N Մ-001-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով որոշման նախագծի 2014 թվականի հունվարի 21-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրի (2012 թվականի ապրիլի 27-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2014 թվականի փետրվարի 28-ը:

2. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված երաժշտական գործիքները և սարքավորումները (37 տեղ, 654 կգ ընդհանուր քաշով, 34,876.15 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 365 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**24 հունվարի 2014 թվականի N Մ-002-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 13-ի N 3.1/3.8-2/210-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունվարի 8-ի N ԴԴ/22/15-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 10-ի N ՎՄ/3-4/103-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված պատվաստանյութի (4 տեղ, 470.2 կգ ընդհանուր քաշով, 76,140 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1,947.80 ԱՄՆ-ի դոլար, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 հունվարի 2014 թվականի N Մ-003-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 13-ի N 3.1/3.8-2/212-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունվարի 10-ի N ԴԴ/22/65-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 10-ի N ՎՄ/3-4/104-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Direct Relief» միջազգային կազմակերպության կողմից ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի (2 տեղ, 28.6 կգ ընդհանուր քաշով, 24,786.35 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 216,300 դրամ, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 հունվարի 2014 թվականի N Մ-004-Ա**
**քաղ. Երևան**

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԴԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 24-ի N 3/3.8-2/20176-13, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N 1/06/1394-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N ՎՄ/3-4/16282-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել եվրոպային հանդբոլի ֆեդերացիայի կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի հանդբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված 300 հանդբոլի գնդակի (15 տեղ, 118.5 կգ ընդհանուր քաշով, 1,716 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի հանդբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 հունվարի 2014 թվականի N Մ-005-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-078-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N 3/3.8-2/20180-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N ՎՄ/3-4/16279-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից ձեռք բերված համակարգչային սարքավորումը (մեկ տեղ, 0.06 կգ ընդհանուր քաշով, 80.70 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 19 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2013-2014 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառույցի պահպանման և հետագա զարգացման աջակցություն» ծրագրի մասին» N Մ-078-Ա որոշմամբ հաստատված (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-647-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում և անհատույց հանձնվելու է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**24 հունվարի 2014 թվականի N Մ-006-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-078-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (N 1)**
**(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N 3/3.8-2/20203-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N ՎՄ/3-4/16285-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից ձեռք բերված իոնափոխանակային խեժը (մեկ տեղ, 0.6 կգ ընդհանուր քաշով, 319 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 50 եվրո փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2013-2014 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառույցի պահպանման և հետագա զարգացման աջակցություն» ծրագրի մասին» N Մ-078-Ա որոշմամբ հաստատված (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-647-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում և անհատույց հանձնվելու է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ին:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**24 հունվարի 2014 թվականի N Մ-007-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N Մ-128-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 3/3.8-2/20314-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N ՎՄ/3-4/16281-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված բժշկական սարքավորումը (18 տեղ, 506 կգ ընդհանուր քաշով, 85,990.50 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 371.99 եվրո, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մարտի 11-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի Բաղրամյան փողոցի վրա գտնվող հանրապետական հիվանդանոցի նոր մասնաշենքի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-128-Ա որոշմամբ (2012 թվականի մայիսի 18-ի N Մ-348-Ա, 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-097-Ա, օգոստոսի 9-ի N Մ-679-Ա և դեկտեմբերի 6-ի N Մ-1138-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ          Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**24 հունվարի 2014 թվականի N Մ-008-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N 3/3.8-1/20181-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N ՎՄ/3-4/16280-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ (2012 թվականի ապրիլի 27-ի N Մ-302-Ա և 2014 թվականի հունվարի 23-ի N Մ-001-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՄՁՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01514872) 2013 թվականի դեկտեմբերի 13-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հատուկ լվացող նյութի ձեռքբերում՝ 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 հունվարի 2014 թվականի N Մ-009-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-094-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 13-ի N 3/3.8-1/214-14 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 10-ի N ՎՄ/3-4/101-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Վանաձորի նոր կառուցվող բժշկական կենտրոնի ծննդատան մասնաշենքի կառուցման» ծրագրի մասին» N Մ-094-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ֆիլիշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07905342) 2013 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մասնաշենքի կառուցման երկաթբետոնե հիմնակմախքի կառուցման աշխատանքների իրականացում՝ 137,791,860 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**24 հունվարի 2014 թվականի N Մ-010-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-867-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
**(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 16-ի N 3.8-1/377-14 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 21-ի N ՎՄ/3-4/537-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02554563) կնքված ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատնկի իրականացում» ծրագրի մասին» N Մ-867-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2009 թվականի փետրվարի 17-ին կնքված՝ N 10498564 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում շարժական կապի ծառայությունների մատուցում՝ ամսական 20,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00847479) 2013 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված՝ N 8 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի և ապրանքների ձեռքբերում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



3) «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00861057) 2013 թվականի դեկտեմբերի 17-ին կնքված՝ N 9 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պատճենահանող մեքենաների, տպող սարքերի, քարտրիջների լիցքավորման և վերանորոգման ծառայությունների մատուցում՝ 120,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
24 հունվարի 2014 թվականի N Մ-011-Ա
քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N Մ-1223-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2014 թվականի հունվարի 22-ի N 26 գրությունը,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 1)» N Մ-1223-Ա որոշման 1-ին կետում «242,177.75 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերը փոխարինել «242,117.75 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**24 հունվարի 2014 թվականի N Մ - 012 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՍԱՍՈՒՆԻԿ ԳՅՈՒՂՈՒՄ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 13-ի N 3/3.8-1/203-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունվարի 15-ի N 02/130-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի հունվարի 9-ի N ՖԲ/ԱնՄ-4/26-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 10-ի N ՎՄ/3-4/99-14 ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N 01/14.2/4089-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 125,981,830 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Սասունիկ գյուղում մանկապարտեզի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՄԻԼԱՔՍ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04403097) 2013 թվականի նոյեմբերի 20-ին կնքված N ՀՀ/Մ-1/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 124,781,830 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մոդեռննախագիծ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00080732) 2013 թվականի նոյեմբերի 20-ին կնքված N ՀՀՏՀ-07/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեխնիկական հսկողության իրականացում՝ 1,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«26» դեկտեմբերի 2013թ.

« ՀՀ Արագածոտնի մարզի Սասունիկ գյուղում մանկապարտեզի կառուցում »
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել ՀՀ Արագածոտնի մարզի Սասունիկ գյուղի երեխաների կյանքի պայմանները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Արագածոտնի մարզ, Սասունիկ գյուղ, սոցիալական բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 125.981.830,00 դրամ: |



| | | |
|---|---|---|
| 6. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Արագածոտնի մարզի Սասունիկ գյուղի համայնքը |
| 7. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2013 նոյեմբերի 20-ից մինչեւ 2014թ. դեկտեմբերի 20-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՄԻԼԱՔՍ ԳՐՈՒՊ» ՓԲԸ -ի կողմից ՀՀ Արագածոտնի մարի Սասունիկ գյուղի մանկապարտեզի կառուցման աշխատանքների իրականացում՝ 124.781.830,00 դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«Մոդեռննախագիծ» ՍՊԸ-ի կողմից շինարարության տեխնիկական հսկողության աշխատանքների իրականացում՝ 1.200.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Արագածոտնի մարզպետարանի հետ: |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 հունվարի 2014 թվականի N Մ - 013 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՇԱԿԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 16-ի N 3/3.8-1/403-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունվարի 15-ի N 02/134-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2013 թվականի հունվարի 10-ի N 03/07-1/138-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 10-ի N ՎՄ/3-4/93-14 ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N 01/14.2/4088-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 39,035,542 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցի հիմնական մասնաշենքի տանիքի վերակառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վահագ-շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08909901) 2013 թվականի նոյեմբերի 29-ին կնքված N ՀՀ/ԴՏ-01/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 38,455,542 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00005417) 2013 թվականի նոյեմբերի 29-ին կնքված՝ N ՀՀ-05/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեղինակային հսկողության իրականացում՝ 200,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01508665) 2013 թվականի նոյեմբերի 29-ին կնքված N ՀՀՏՀ-06/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեխնիկական հսկողության իրականացում՝ 380,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան

«26» դեկտեմբերի 2013թ.

# « ՀՀ Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցի հիմնական մասնաշենքի տանիքի վերակառուցում »

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել ՀՀ Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցի աշակերտա-ուսուցչական կազմի աշխատանքի պայմանները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Արագածոտնի մարզի Օշական գյուղ, կրթության բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 39.035.542,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցը |
| 7. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2013թ նոյեմբերի 29-ից մինչեւ 2014թ. մայիսի 29-ը: |

2

| | | |
|---|---|---|
| 8. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | «ՎԱՀԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից գլխավոր մասնաշենքի տանիքի վերակառուցման աշխատանքների իրականացում՝ 38.455.542,00 դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«ՀԳՇՆ» ՍՊԸ-ի կողմից շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության իրականացում՝200.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>"Հայաստանի Հանրապետության նախագծերի Պետական Արտագերատեսչական փորձաքննություն" ՓԲԸ ի կողմից շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում՝ 380.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Արագածոտնի մարզպետարանի հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝ Արմինա Դարբինյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 հունվարի 2014 թվականի N Մ - 014 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԱՎՐԱ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 17-ի N 3/3.8-1/412-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունվարի 15-ի N 02/133-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2013 թվականի հունվարի 9-ի N 03/07-1/90-14, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 10-ի N ՎՄ/3-4/60-14 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 28-ի N 01/6243-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1,023,333 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բավրա գյուղի դպրոցի համար համակարգչային սարքավորումների ձեռքբերում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

անհատ ձեռներեց Վահագն Մելիք-Մարտիրոսյանի հետ (ՀՎՀՀ՝ 21304935) 2013 թվականի դեկտեմբերի 6-ին կնքված՝ N ԱՎ-Բ-01/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված սարքավորումների ձեռքբերում՝ 1,023,333 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«26» դեկտեմբերի 2013թ.

«ՀՀ Շիրակի մարզի Բավրա գյուղի դպրոցի համար համակարգչային սարքավորումների ձեռքբերում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել ՀՀ Շիրակի մարզի Բավրա գյուղի դպրոցը անհրաժեշտ համակարգչային սարքավորումներով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Շիրակի մարզ, Բավրա գյուղ, կրթության բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 1.023.333,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Շիրակի մարզի Բավրա գյուղի դպրոցը |

1/3

2

| | | |
|---|---|---|
| 7. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2013թ դեկտեմբերի 06-ից մինչեւ 2014թ մարտի 06-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Անհատ ձեռներեց Վահագն Մելիք-Սարտիրոսյանից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ապրանքատեսակների ցանկի համաձայն՝ համակարգչային սարքավորումների ձեռքբերում և անհատույց հանձնում՝ 1.023.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Գիտության եւ կրթության նախարարության հետ: |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

1/3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 հունվարի 2014 թվականի N Մ - 015 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՄՈՒՇԿԱՊԱՏ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ՕԺԱՆԴԱԿ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի դեկտեմբերի 27-ի N 3/3.8-1/20365-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունվարի 15-ի N 02/132-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի դեկտեմբերի 27-ի N ՎՄ/3-4/16451-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 120,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Մուշկապատ գյուղի համայնքային կենտրոնի կառուցման նախագծի փորձաքննություն» օժանդակ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Միր-Գազշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01236957) 2013 թվականի դեկտեմբերի 2-ին կնքված՝ N Փ-05/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համայնքային կենտրոնի կառուցման նախագծի փորձաքննություն՝ 120,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

« 24» հունվարի 2013.թ.

«ԼՂՀ Մարտունու շրջանի Մուշկապատ գյուղի
համայնքային կենտրոնի կառուցման նախագծի փորձաքննություն»
ԾՐԱԳԻՐ
(օժանդակ)

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Օժանդակել ԼՂՀ Մարտունու շրջանի Մուշկապատ գյուղի համայնքային կենտրոնի կառուցմանը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ԼՂՀ Մարտունու շրջանի Մուշկապատ գյուղ, սոցիալական բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 120.000,00 դրամ: |



| | | |
|---|---|---|
| 6. | Բարեգործություն ստացողը | ԼՂՀ Մարտունու շրջանի Մուշկապատ գյուղի համայնքը |
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2013թ դեկտեմբերի 02 -ից մինչեւ 2014թ. մարտի 02-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Միր-Գազշին» ՍՊԸ-ի կողմից ԼՂՀ Մարտունու շրջանի Մուշկապատ գյուղի համայնքային կենտրոնի կառուցման նախագծի փորձաքննություն՝ 120.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**24 հունվարի 2014 թվականի N Մ - 016 - Ա**

**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՐԴԵՆԻՍ-ՄԱՐՏԱԿԵՐՏ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ՉԱՐԵՔԹԱՐ - ԴՐՄԲՈՆ 10 ԵՎ 10.4 ԿԻԼՈՄԵՏՐ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՈՒ ԱԼԻՇԱՆ - ՍԱՐՍԱՆԳ 4.8 ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՏՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ» ՕԺԱՆԴԱԿ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 15-ի N 3/3.8-1/331-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունվարի 15-ի N 02/131-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 10-ի N ՎՄ/3-4/106-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 4,200,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի Չարեքթար – Դրմբոն 10 կմ և 10.4 կմ երկարությամբ հատվածների ու Ալիշան - Սարսանգ 4.8 կմ երկարությամբ հատվածի կառուցման հեղինակային հսկողություն» օժանդակ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ճաննախագիծ» ինստիտուտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00813453) 2013 թվականի դեկտեմբերի 13-ին կնքված N ԼՂ/ՀՀ-Ճ-04/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Չարեքթար – Դրմբոն 10.4 կմ երկարությամբ հատվածի կառուցման առաջին փուլի շինարարական աշխատանքների իրականացման հեղինակային հսկողության իրականացում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ճաննախագիծ» ինստիտուտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00813453) 2013 թվականի դեկտեմբերի 13-ին կնքված N ԼՂ/ՀՀ-Ճ-01/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Չարեքթար – Դրմբոն 10 կմ երկարությամբ հատվածի կառուցման առաջին փուլի շինարարական աշխատանքների իրականացման հեղինակային հսկողության իրականացում՝ 2,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Ճաննախագիծ» ինստիտուտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00813453) 2013 թվականի դեկտեմբերի 13-ին կնքված N ԼՂ/ՀՀ-Ճ-07/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Ալիշան - Սարսանգ 4.8 կմ երկարությամբ հատվածի կառուցման առաջին փուլի շինարարական աշխատանքների իրականացման հեղինակային հսկողության իրականացում՝ 900,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյան

«26» դեկտեմբերի 2013թ.

**«Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի Չարեքքար-Դրմբոն 10կմ ու 10.4կմ երկարությամբ հատվածների և Ալիշան-Սարսանգ 4.8կմ երկարությամբ հատվածի կառուցման հեղինակային հսկողություն»**

**ԾՐԱԳԻՐ**

**օժանդակ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Օժանդակել Վարդենիսից Մարտակերտ տանող ավտոճանապարհի կառուցմանը |
| 2. | Ծրագրի բարեգործական ոլորտի նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ԼՂՀ, ճանապարհաշինության բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 4.200.000,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բնակչությունը |

2

| | | |
|---|---|---|
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2013թ դեկտեմբերի 13-ից մինչեւ 2014թ դեկտեմբերի 13-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Ճանճախագիծ» ինստիտուտ ՍՊԸ կողմից Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի ստորև նշված հատվածների կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության իրականացում՝<br><br>Չարեքքար-Դրմբոն – 10կմ -2.300.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի,<br><br>Չարեքքար-Դրմբոն– 10.04կմ -1.000.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի,<br><br>Ալիշան-Սարսանգ-4.8կմ-900.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ Կառավարության հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 հունվարի 2014 թվականի N Մ - 017 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՐԴԵՆԻՍ-ՄԱՐՏԱԿԵՐՏ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ՔԱՐՎԱՃԱՌԻ ԽԱՉՄԵՐՈՒԿ - ՉԱՐԵՔԹԱՐ 1-ԻՆ ՏԵՂԱՄԱՍԻ 12.6 ԿԻԼՈՄԵՏՐ ԵՎ 2-ՐԴ ՏԵՂԱՄԱՍԻ 9.8 ԿԻԼՈՄԵՏՐ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ» ՕԺԱՆԴԱԿ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 16-ի N 3/3.8-1/361-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունվարի 15-ի N 02/129-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 10-ի N ՎU/3-4/96 -14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 5,500,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի Քարվաճառի խաչմերուկ – Չարեքթար 1-ին տեղամասի 12.6 կմ և 2-րդ տեղամասի 9.8 կմ հատվածների կառուցման հեղինակային հսկողություն» օժանդակ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՀԳԾՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00005417) 2013 թվականի դեկտեմբերի 13-ին կնքված՝ N ԼՂ/ՀՀ-Ճ-02/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 1-ին տեղամասի 12.6 կմ հատվածի կառուցման առաջին փուլի շինարարական աշխատանքների իրականացման հեղինակային հսկողության իրականացում՝ 3,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀԳԾՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00005417) 2013 թվականի դեկտեմբերի 13-ին կնքված՝ N ԼՂ/ՀՀ-Ճ-03/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2-րդ տեղամասի 9.8 կմ հատվածի կառուցման առաջին փուլի շինարարական աշխատանքների իրականացման հեղինակային հսկողության իրականացում՝ 2,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«26» դեկտեմբերի 2013թ.

**«Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի Քարվաճառի խաչմերուկ-Չարեքթար 1-ի տեղամասի 12.6կմ և 2-րդ տեղամասի 9.8կմ հատվածների կառուցման հեղինակային հսկողություն»**

## ԾՐԱԳԻՐ
օժանդակ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Օժանդակել Վարդենիսից Մարտակերտ տանող ավտոճանապարհի կառուցմանը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ<br>(ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ԼՂՀ, ճանապարհաշինության բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 5.500.000,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բնակչությունը |



| | | |
|---|---|---|
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2013թ դեկտեմբերի 13-ից մինչեւ 2014թ դեկտեմբերի 13-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԳԸՆ» ՍՊԸ կողմից Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի Քարվաճառի խաչմերուկ-Չարեքթար 1-ին տեղամասի 12.6կմ (3.000.000,00 դրամ) և 2-րդ տեղամասի 9.8կմ (2.500.000,00 դրամ) հատվածների կառուցման հեղինակային հսկողության իրականացում՝ 5.500.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ Կառավարության հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 հունվարի 2014 թվականի N Մ - 018 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՐԴԵՆԻՍ-ՄԱՐՏԱԿԵՐՏ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ՄԱՂԱՎՈՒԶ – ՄԱՐՏԱԿԵՐՏ 8.2 ԿԻԼՈՄԵՏՐ ԵՎ ԴՐՄԲՈՆ - ԱԼԱՇԱՆ 10 ԿԻԼՈՄԵՏՐ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ՕԺԱՆԴԱԿ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 17-ի N 3/3.8-1/421-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունվարի 15-ի N 02/135-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 10-ի N ՎՄ/3-4/105-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 730,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի Մաղավուզ – Մարտակերտ 8.2 կմ և Դրմբոն - Ալաշան 10 կմ հատվածների կառուցման նախագծի փորձաքննություն» օժանդակ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01508665) 2013 թվականի դեկտեմբերի 9-ին կնքված N 95 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մաղավուզ – Մարտակերտ 8.2 կմ հատվածի կառուցման նախագծի փորձաքննություն ՝ 330,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01508665) 2013 թվականի դեկտեմբերի 9-ին կնքված N 95ա պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Դրմբոն - Ալաշան 10 կմ հատվածի կառուցման նախագծի փորձաքննություն ՝ 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Յայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«26» դեկտեմբերի 2013թ.

«Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի Մաղավուզ-Մարտակերտ 8,2կմ և Դրմբոն- Ալաշան 10կմ հատվածների կառուցման նախագծի փորձաքննություն»

## ԾՐԱԳԻՐ
օժանդակ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Օժանդակել Վարդենիսից Մարտակերտ տանող ավտոճանապարհի կառուցմանը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ԼՂՀ, ճանապարհաշինության բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 730.000,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բնակչությունը |

2

| | | |
|---|---|---|
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2013թ դեկտեմբերի 09-ից մինչեւ 2014թ.ապրիլի 09-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի կողմից Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի Մաղավուզ-Մարտակերտ 8,2կմ հատվածի կառուցման նախագծի փորձաքննություն՝ 330.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի,<br><br>Դրմբոն-Ալաշան 10կմ հատվածի նախագծման փորձաքննություն՝ 400.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ Կառավարության հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինե Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 հունվարի 2014 թվականի N Մ- 019 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 17-ի N 3.8-2/362-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունվարի 10-ի N ԴԴ/22/68-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 17-ի N ՎՄ/3-4/343-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված դեղորայքը, բժշկական պարագաները և սարքերը (17 տեղ, 4,533 կգ ընդհանուր քաշով, 93,467.77 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 8,450 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1259-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 հունվարի 2014 թվականի N Մ- 020 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-947-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱԳԱՊԵ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 3/3.8-2/20319-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N ՖԲ/ԱնՄ-5/9872-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N ՎՄ/3-4/16288-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Հյուսիսային Կարոլինա նահանգի մեթոդիստական եկեղեցու կողմից Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով «Ագապե» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (1613 տեղ, 6824 կգ ընդհանուր քաշով, 87337.98 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 7589 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Ագապե» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Մարդկային տառապանքը որպես պատերազմի և բնական աղետի հետևանք» ծրագրի մասին» N Մ-947-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**ԱՄՆ «ԱԳԱՊԵ» կրոնաբարեգործական կազմակերպության ՀՀ մասնաճյուղի հասցեով 2013թ. դեկտեմբեր ամսին ուղարկված մարդասիրական բեռան բաշխման ցուցակ**

1/12.9

| Վայրը | Ապրանքի անվանումը | Բաշխվող քանակը կգ | Արժեքը ԱՄՆԴ |
|---|---|---|---|
| ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի և գյուղերի՝ «ԱԳԱՊԵ»-ում գրանցված սոցիալապես անապահով մոտ 700 ընտանիքներ | Մահճակալներ և ներքնակներ | 279 | 2,991.00 |
| | Անկողնային պարագաներ | 136 | 1,468.60 |
| | Երեխաների Ամանորյա տուփեր | 1053 | 16,852.80 |
| | Նոր հագուստ | 792 | 16,974.00 |
| | Օգտագործված հագուստ և աքսեսուարներ | 2601 | 35,289.45 |
| | Բաճկոններ նոր և օգտագործված | 94 | 1,299.40 |
| | Կենցաղային պարագաներ | 33 | 246.40 |
| | Կարուձևի պարագաներ | 446 | 5,053.20 |
| | Նոր կոշիկներ | 33 | 729.60 |
| Բերձորի «Երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ | Պահածոյացված սննդամթերք | 650 | 1,731.53 |
| ԱՄՆ ԱԳԱՊԵ ԿԲԿ ՀՀ մ/ճ<br>Շինանյութը և շինարարական պարագաները նախատեսված են բնակելի տների վերանորոգման համար | Տպագրական թուղթ | 48 | 188.00 |
| | Գրքեր, սկավառակներ | 11 | 20.00 |
| | Արկղերի տակդիրներ | 275 | 150.00 |
| | Շինանյութ և շինարարական պարագաներ | 32 | 275.00 |
| ԼՂՀ Քաշաթաղի բուժմիավորում | Բժշկական պարագաներ | 341 | 4,069.00 |

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿՐՈՆԱԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ՏՆՕՐԵՆ Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունվարի 2014 թվականի N Մ - 021 - Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի N Մ-1050-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 14-ի N 3/3.8-1/247 -14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 10-ի N ՎՄ/3-4/94-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 15-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի «Սուրբ Աստվածածին» ծննդատուն» ՓԲԸ-ի վարչական մասնաշենքի տանիքի վերակառուցման նախագծում» ծրագրի մասին» N Մ-1050-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Միր-Գազշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01236957) 2013 թվականի հոկտեմբերի 30-ին կնքված N Փ-04/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության իրականացում՝ 30,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**24 հունվարի 2014 թվականի N Մ - 022 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-107-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N 3/3.8-1/20364-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N ՎՄ/3-4/-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղի բուժկետի և բազմաֆունկցիոնալ սրահի կառուցում» ծրագրի մասին» N Մ-107-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և ծրագրի 5-րդ կետում «49,355,900 դրամ» բառերը փոխարինել «51,223,800 դրամ» բառերով.

2) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում «48,585,900 դրամ» բառերը փոխարինել «50,453,800 դրամ» բառերով.

3) ծրագրի 7-րդ կետում «մինչև 2013 թ. օգոստոսի 8-ը» բառերը փոխարինել «մինչև 2014 թ. փետրվարի 28-ը» բառերով.

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 հունվարի 2014 թվականի N Մ- 023 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-888-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հիմնադրամի տնօրենի 2014 թվականի հունվարի 14-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Արարատի մարզի Մասիս քաղաքի թիվ 6 դպրոցի մասնակի վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-889-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «մինչև հոկտեմբերի 30-ը» բառերը փոխարինել «մինչև 2014 թվականի ապրիլի 28-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 հունվարի 2014 թվականի N Մ- 024 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2014 թվականի հունվարի 24-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 16-ի N 3/3.8-1/363-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունվարի 21 -ի N 02/251-14, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2014 թվականի հունվարի 21-ի N 07/07.1/177-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի հունվարի 17-ի N ՖՐ/ԱնՄ-4/146-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 21-ի N ՎՄ/3-4/539-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 37,828,900 դրամ ընդհանուր արժողությամբ «Երեխաների հովանավորություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայփոստ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02507464) 2012 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված N PD-03-01-13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է փոստային ծառայությունների մատուցում՝ 34,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Խաչարամ Կոնսերվատորիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01000825) 2013 թվականի դեկտեմբերի 24-ին կնքված N WVA/SOD/PR-14/001/FY14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում, 3,828,900 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Վորլդ վիժն ինթերնեյշնլե միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի տնօրեն՝
Ժիրայր Էդիլյան

29 հունվարի 2014թ.

Երեխաների հովանավորություն
Ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Երեխաների հովանավորության ծրագրի հիմնական նպատակն է ստեղծել բարեկեցիկ միջավայր երեխաների համար՝ համայնքային զարգացման այնպիսի ծրագրեր իրականացնելու միջոցով, որոնցում մեծ դեր ունի երեխաների և նրանց հովանավորների միջև սերտ նամակագրությունը |
| 2 | Ծրագրի բարեգործական որակավորման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | 1. "Վորլդ վիժն" Մեծ Բրիտանիայի գրասենյակ<br>հասցե՝ World Vision UK Opal Drive, Fox Milne, Milton Keynes, MK15 0ZR, United Kingdom,<br>հեռախոս՝ +44 1908 841000.<br>2. "Վորլդ վիժն" ԱՄՆ-ի գրասենյակ<br>հասցե՝ 34834 Weyerhaeuser Way So. Federal Way, WA 98001 հեռախոս՝ +1-888-511-6548.<br>3. "Վորլդ վիժն" Շվեյցարիայի գրասենյակ<br>Հասցե՝ World Vision Switzerland, Kriesbachstrasse 30, CH-8600 Duebendorf, Switzerland, Հեռ.՝ + 41 44 510 1515.<br>4. "Վորլդ վիժն" Ֆրանսիայի գրասենյակ<br>հասցե՝ 7 rue Pasquier - 75008 Paris, հեռախոս՝ +33-1-48-03-92-42.<br>5. "Վորլդ վիժն" Գերմանիայի գրասենյակ<br>հասցե՝ World Vision Deutschland e.V. Am Houiller Platz 4 61381 Friedrichsdorf հեռախոս՝ 06172 / 763 – 0.<br>6. "Վորլդ վիժն" Թայվանի գրասենյակ<br>հասցե՝ 6F, 133, Sec. 4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan, հեռախոս՝ 886-2-2175-1995<br>7. "Վորլդ վիժն" Կանադայի գրասենյակ<br>World Vision Canada, 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada հեռ. 905-565-6100 |
| 4 | Ծրագիրը կատարողը | "Վորլդ վիժն ինթերնեշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը,<br>հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755, հեռախոս՝ 749-118, (060) 491-010 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրն է հանդիսանում "Վորլդ վիժն ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երևանի, Գյումրու, Իջևանի, Վարդենիսի, Գավառի, Սիսիանի, Կապանի, Ստեփանավանի, Ալավերդու, Ապարանի, Թալինի, Ճամբարակի և Ամասիայի Տարածքային Զարգացման Ծրագրերում ընդգրկված 190 համայնքները (համայնքների ցանկը կցվում է):<br>Ծրագրի բնագավառը՝ սոցիալական: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 37,828,900 (երեսունյոթ միլիոն ութ հարյուր քսանութ հազար) դրամ՝ առանց ԱԱՀ-ի, ներառյալ 34,000,000 (երեսուն չորս միլիոն) ՀՀ դրամ՝ փոստային ծառայությունների համար և 3,828,900 (երեք միլիոն ութ հարյուր քսանութ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ՝ հովանավորության ծրագրի նյութերի տպագրության համար: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող են հանդիսանում «Վորլդ վիժն ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երևանի, Գյումրու, Տավուշի, Վարդենիսի, Գավառի, Սիսիանի, Կապանի, Ստեփանավանի, Ալավերդու, Ապարանի, Թալինի, Ճամբարակի և Ամասիայի Տարածքային Զարգացման Ծրագրերում ընդգրկված 190 համայնքներում բնակվող 32750 երեխաները:<br>Երեխաների տվյալների հավաքագրման ժամանակ կնքվում է երկկողմանի համաձայնագիր, որը հաստատում է տվյալ երեխայի ծնողի համաձայնությունը երեխաներին ՎՎՀ-ի կողմից տվյալ համայնքում իրականացվող ծրագրերում ընդգրկելու մասին: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրն իրականացվելու է 2013 թ. դեկտեմբերի 24-ից մինչև 2014 թ. դեկտեմբերի 31-ը: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի նպատակին հասնելու համար սերտ նամակագրական կապ է հաստատվում 190 համայնքներում բնակվող 32750 երեխաների և Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Թայվանի և Կանադայի անհատ հովանավորների միջև, որի արդյունքում Հայաստանի երեխաների համար ստեղծվում են հնարավորություններ շփվելու և ճանաչելու այլ երկրներում ապրող մարդկանց, ծանոթանալու նրանց մշակույթին և սովորույթներին, իսկ հովանավորների համար ստեղծվում են հնարավորություններ ֆինանսական աջակցություն ցուցաբերել այդ երեխաների բնակության համայնքներում՝ զարգացման ծրագրերի իրականացման միջոցով: "Վորլդ վիժն ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հովանավորության ծրագրի մեխանիզմը հանդիսանում է ոչ թե անհատական ֆինանսական աջակցություն անհատ երեխաներին, այլ հովանավորներից ստացված ֆինանսական ռեսուրսների միավորումը՝ համայնքային զարգացման ծրագրերի իրականացման համար, որից կօգտվեն ոչ միայն երեխաները, ում անունով հովանավորները գումարներ են հատկացնում, այլև համայնքի բոլոր երեխաները: Հովանավորների կողմից ֆինանսավորված համայնքային ծրագրերի վերաբերյալ տեղեկություններ հովանավորները ստանում են երեխաների կողմից ուղարկված նամակներից, ինչպես նաև երեխաների կողմից լրացվող տարեկան հաշվետվություններից և ավելի հստակ պատկերացում են կազմում իրենց տրամադրած միջոցների շնորհիվ համայնքներում կատարված բարեփոխումների մասին: Նամակագրության թարգմանությունը իրականացվում է Հովանավորության ծրագրի աշխատակիցների կողմից:<br>Այդ միջոցառումները իրականացնելու համար ծախսվում է տարեկան 34,000,000 (երեսուն չորս միլիոն) ՀՀ դրամ՝ փոստային ծառայությունների համար և 3,828,900 (երեք միլիոն ութ հարյուր քսանութ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ հովանավորության ծրագրի նյութերի տպագրության համար (տարեկան հաշվետվության բրոշյուր, ծանոթացման նամակի ձև, պատասխան նամակի ձև, 2 չափսի ծրարներ): |

<table>
<tr><td>10</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>Հովանավորության ծրագիրը ներառում է հետևյալ աշխատանքները.<br>
<table>
<tr><th>Գործողություն</th><th>Ժամկետ</th><th>գումար (դրամ)</th></tr>
<tr><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>"Հայփոստ" ФԲԸ-ի միջոցով փոստային ծառայությունների իրականացում</td><td>01.01.14 - 31.03.14</td><td>1797000</td></tr>
<tr><td>"Հայփոստ" ФԲԸ-ի միջոցով փոստային ծառայությունների իրականացում</td><td>01.04.14 - 30.06.14</td><td>20639000</td></tr>
<tr><td>"Հայփոստ" ФԲԸ-ի միջոցով փոստային ծառայությունների իրականացում</td><td>01.07.14 - 30.09.14</td><td>1575000</td></tr>
<tr><td>"Հայփոստ" ФԲԸ-ի միջոցով փոստային ծառայությունների իրականացում</td><td>01.10.14 - 31.12.14</td><td>9989000</td></tr>
<tr><td>Նամակագրական նյութերի տպագրում</td><td>24.12.2013թ.-<br>31.01.2014</td><td>3828900</td></tr>
<tr><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="2">Ընդամենը`</td><td>37828900</td></tr>
</table></td></tr>
<tr><td>11</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր ներկայացված ծրագրով նախատեսված չեն:</td></tr>
<tr><td>12</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ</td><td>Ներկայացված ծրագրի իրականացման շրջանակներում «Վորլդ վիժն ինթերնեյշնլե միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է գյուղական և քաղաքային տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ինչպես նաև 190 համայնքներում գործող դպրոցների և մանկապարտեզների հետ:</td></tr>
<tr><td>13</td><td>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</td><td>Ծրագրի անմիջական վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ վիժն ինթերնեյշնլե միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երևանի, Գյումրու, Իջևանի, Վարդենիսի, Գավառի, Միսիանի, Կապանի, Ստեփանավանի, Ալավերդու, Ապարանի, Թալինի, Ճամբարակի և Ամասիայի Տարածքային Զարգացման Ծրագրերի գրասենյակների աշխատակիցների կողմից, ինչպես նաև Հովանավորության բաժնի մասնագետների կողմից:<br>«Վորլդ վիժն ինթերնեյշնլե միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:</td></tr>
</table>

Մարլեն Մուրադյան

«Վորլդ վիժն ինթերնեյշնլե միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Հովանավորության բաժնի ղեկավար

# Համայնքների ցանկն ըստ մարզերի



| ## | Մարզ/ Համայնք |
|---|---|
| | Սյունիք մարզ |
| 1 | Բռնակոթ |
| 2 | Անգեղակոթ |
| 3 | Գորհայք |
| 4 | Սառնակունք |
| 5 | Շաղաթ |
| 6 | Մուծք |
| 7 | Բալաք |
| 8 | Շաքե |
| 9 | Սիսիան |
| 10 | Իշխանասար |
| 11 | Աշոտավան |
| 12 | Սալվարդ |
| 13 | Տոլորս |
| 14 | Աղիտու |
| 15 | Լոր |
| 16 | Շամբ |
| 17 | Լծեն |
| 18 | Գետաթաղ |
| 19 | Դարբաս |
| 20 | Հարժիս |
| 21 | Հալիձոր |
| 22 | Շինուհայր |
| 23 | Խոտ |
| 24 | Քարահունջ |
| 25 | Ագարակ |
| 26 | Անտառաշատ |
| 27 | Արծվանիկ |
| 28 | Եղվարդ |
| 29 | Գեղանուշ |
| 30 | Դավիթ Բեկ |
| 31 | Ծավ |
| 32 | Շիկահող |
| 33 | Սրաշեն |
| 34 | Սյունիք |
| 35 | Վերին Խոտանան |
| 36 | Տանձավեր |
| 37 | Օխտար |
| 38 | Աղվանի |
| 39 | Գեղի |
| 40 | Եղեգ |
| 41 | Շղարշիկ |
| 42 | Բեխ |
| 43 | Աշոտավան |
| 44 | Բարաբաթում |
| 45 | Կավարտ |
| 46 | Վաչագան |
| 47 | Ձորք |
| 48 | Հալիձոր |
| 49 | Վահանավանք |
| 50 | Բաղաբուրջ |
| 51 | Բաղաբերդ |
| 52 | Բաղաբերդ 1 |
| 53 | Արամ Մանուկյան |
| 54 | Մուշեղ Հարությունյան |
| 55 | Ներքին Խոտանան |
| 56 | Շինարարներ |
| 57 | Երկաթուղայիններ |
| | Վարդենիս մարզ |
| 58 | Արեգունի |
| 59 | Արփունք |
| 60 | Արտանիշ |
| 61 | Ավազան |
| 62 | Այրք |
| 63 | Ազատ |
| 64 | Դարանակ |
| 65 | Գեղամաբակ |
| 66 | Գեղամասար |
| 67 | Ջաղացաձոր |
| 68 | Ջիլ |
| 69 | Կախակն |
| 70 | Կութ |
| 71 | Կուտական |
| 72 | Նորաբակ |
| 73 | Փամբակ |
| 74 | Շատջրեք |
| 75 | Շատվան |
| 76 | Սոթք |
| 77 | Տորֆավան |
| 78 | Տրետուկ |
| 79 | Ծափաթաղ |
| 80 | Վանևան |
| 81 | Լճավան |
| 82 | Փոքր Մասրիկ |
| 83 | Նորակերտ |
| 84 | Մեծ Մասրիկ |
| 85 | Մաքենիս |
| 86 | Ծովակ |

| ## | Մարզ/ Համայնք |
|---|---|
| | Լոռի մարզ |
| 95 | Ախթալա |
| 96 | Աքորի |
| 97 | Կաճաճկուտ |
| 98 | Հաղպատ |
| 99 | Արևածագ |
| 100 | Մղարթ |
| 101 | Քարինջ |
| 102 | Ճոճկան |
| 103 | Մեծ Այրում |
| 104 | Ագարակ |
| 105 | Ամրակից |
| 106 | Բլագոդարնոյե |
| 107 | Գար-Գառ |
| 108 | Գյուլագարակ |
| 109 | Լեջան |
| 110 | Լոռի-Բերդ |
| 111 | Լեռնահովիտ |
| 112 | Կուրթան |
| 113 | Կողես |
| 114 | Միխայլովկա |
| 115 | Յաղդան |
| 116 | Հոբարձի |
| 117 | Պուշկինո |
| 118 | Պրիվոլնոյե |
| 119 | Նորաշեն |
| 120 | Սարչապետ |
| 121 | Սվերդլով |
| 122 | Ուռուտ |
| 123 | Վարդաբլուր |
| | Արագածոտն մարզ |
| 124 | Ն. Բազմաբերդ |
| 125 | Կաթնաղբյուր |
| 126 | Դավթաշեն |
| 127 | Աշնակ |
| 128 | Իրինդ |
| 129 | Կաքավաձոր |
| 130 | Ագարակավան |
| 131 | Ն. Սասնաշեն |
| 132 | Վ. Բազմաբերդ |
| 133 | Վ.Սասնաշեն |
| 134 | Մաստարա |
| 135 | Գառնահովիտ |
| 136 | Ձովասար |
| 137 | Ոսկեթաս |
| 138 | Կարմրաշեն |
| 139 | Ն.Արթիկ |
| 140 | Սուսեր |
| 141 | Ցամաքասար |
| 142 | Հացաշեն |
| 143 | Արտենի |
| 144 | Զարինջա |
| 145 | Ակունք |
| 146 | Թաթուլ |
| 147 | Եղնիկ |
| 148 | Դաշտադեմ |
| 149 | Թալին |
| 150 | Ապարան |
| 151 | Արագած |
| 152 | Ձորագլուխ |
| 153 | Հարթավան |
| 154 | Լուսագյուղ |
| 155 | Քուչակ |
| 156 | Շենավան |
| 157 | Շողակն |
| 158 | Վարդենիս |
| 159 | Եղիպատրուշ |
| 160 | Երնջատափ |
| 161 | Ծաղկաշեն |
| 162 | Վարդենուտ |
| 163 | Ափնա |
| 164 | Սարալանջ |
| 165 | Նիգավան |
| | Տավուշ մարզ |
| 166 | Արծվաբերդ |
| 167 | Ն.Կ. Աղբյուր |
| 168 | Նավուր |
| 169 | Բերդ |
| 170 | Նորաշեն |
| 171 | Պառավաքար |
| 172 | Տավուշ |
| 173 | Աչաջուր |
| 174 | Դիտավան |
| 175 | Գետահովիտ |
| 176 | Խաշտառակ |
| 177 | Այգեհովիտ |
| 178 | Ազատամուտ |
| 179 | Լուսաձոր |

# Համայնքների ցանկն ըստ մարզերի

Հավելված 1

| ## | Մարզ/ Համայնք |
|---|---|
| 87 | Խաչաղբյուր |
| 88 | Վարդենիս |
| 89 | Կարճաղբյուր |
| 90 | Ակունք |

| ## | Մարզ/ Համայնք |
|---|---|
| 180 | Սարիգյուղ |
| 181 | Սևքար |
| 182 | Բաղանիս |
| 183 | Կոթի |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 հունվարի 2014 թվականի N Մ- 025 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-1076-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական Կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 20-ի N 3.8-1/543-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 23-ի N ՎՄ/3-4/669-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2013 թվականի նոյեմբերի 11-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Աջակցություն սիրիահայերին» N Մ-1076-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բեներիկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00082634) 2014 թվականի հունվարի 13-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Աջակցություն սիրիահայերին» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում շահառուներին 300 հատ նվեր-քարտի դիմաց հագուստի և կոշիկի տրամադրում՝ 40,034,040 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 հունվարի 2014 թվականի N Մ - 026 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՍԱՏԱՐ» ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 17-ի N 1.1/3.8-2/404-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի հունվարի 17-ի N ՖԲ/ԱնՄ-4/147-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 24-ի N ՎՄ/3-4/670-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի անհատ բարերար Ստեփան Գումրիկյանի կողմից «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բեռի (օգտագործված հագուստ՝ 36 տեղ, 720 կգ ընդհանուր քաշով, 700 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 50 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» Տ/Մ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը: Բեռը նախատեսված է «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպության շահառուների համար:

2. «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ          Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 հունվարի 2014 թվականի N Մ- 027 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 դեկտեմբերի 24-ի N 3/3.8-1/20179-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N ՎՄ/3-4/16278-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան 0009, Կորյունի փողոց, 19ա) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» ավագ դպրոց ծրագրի մասին» N Մ-1063-Ա (2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1089-Ա, 2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-893-Ա, 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-436-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 6-ի Մ-1194-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ար և Ար Դիզայն Քնսթրաքշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01547716) 2013 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 911,472 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 հունվարի 2013 թվականի N Մ- 028 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՎՏՈՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ՀԱԿԱՍԱՌԵՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N 3/3.8-1/20363-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N 02/7921-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N ՎՄ/3-4/16289-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 5,189.000 դրամ արժողությամբ «Ավտոտնտեսության շենքի հակասառեցման համակարգերի տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կարին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02529731) 2013 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ավտոտնտեսության շենքի հակասառեցման համակարգերի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 5,189.000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ
ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«19» դեկ. 2013 թ.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ավտոտնտեսության շենքում հակասառեցման համակարգերի տեղադրման աշխատանքների

# ԾՐԱԳԻՐ

1/10

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն տեղադրել հակասառեցման համակարգեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ավտոտնտեսության շենքում: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը | Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուր Էջմիածին/քաղաքաշինական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 5,189,000 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Մայրավանքի պաշտոնեությունը և միաբանությունը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 12 դեկտեմբերի 2013թ. – 12 մարտի 2014թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է տեղադրել հակասառեցման համակարգեր Ավտոտնտեսության շենքում՝ 5,189,000 ՀՀ դրամ գումարով:<br>Աշխատանքներն իրականացվում է՝ <<Կարին>> ՍՊԸ-ի (ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 54/1,39, ՀՎՀՀ 02529731) կողմից, պայմանագիր՝08ԾՆ/13, կնքված 12.12.2013թ, 5,189,000 ՀՀ դրամ գումարով, |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է տեղադրել հակասառեցման համակարգեր Ավտոտնտեսության շենքում՝ 5,189,000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չի նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 հունվարի 2014 թվականի N Մ-029 -Ա**

# «ՕՐՐԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 3/3.8-1/19662-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N 02/7724-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի 23-ի N ՖԲ/ԱնՄ-4/9711-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 23-ի N ԴԴ/22/14120-13, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N 03/07-1/15209-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N ՎՄ/3-4/16058-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության 2013 թվականի դեկտեմբերի 23-ի N 24/2521 և Երևանի քաղաքապետարանի 2013 թվականի դեկտեմբերի 23-ի N 02/34-71464h եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, առաջին Եկմալյան 6, ՀՎՀՀ՝ 02552842) 2014 թվականին իրականացվող՝ 113,041,834 դրամ ընդհանուր արժեքով, «Օրրան» օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի «Կենտրոն» տեղամասի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2004 թվականի հունիսի 17-ին կնքված N 010309530 51/3162/4682 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամա-



նակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 1,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2006 թվականի հուլիսի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարում՝ 150,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Հարավ» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի օգոստոսի 14-ին կնքված N 263135 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 1,540,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի ապրիլի 7-ին կնքված N 012.08.13. 0546 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կենտրոնի գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 3,200,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2013 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված՝ N Ե-234 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կենտրոնի գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման և կարգաբերման աշխատանքների իրականացում՝ 69,718 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Գրանթ Թորնթոն» ՊԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00040569) 2013 թվականի ապրիլի 29-ին կնքված N AT-AU-024-13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2013 թվականի ֆինանսական տարվա աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «ՍԱՍ Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02538542) 2013 թվականի սեպտեմբերի 10-ին կնքված N AR110913 նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում մթերքի մատակարարում՝ 20,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Վալենսիա» ՀՁ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00835704) 2013 թվականի դեկտեմբերի 6-ին կնքված N 1-12/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երեխաների այցելություն ջրաշխարհ՝ 400,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Տեխնիկական անվտանգություն ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01556354) 2012 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված N 3410 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կենտրոնի գազի կաթսայի տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացում՝ 33,830 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2010 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված N 74556 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 1,200,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

11) «Դարոյնք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01220854) 2011 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված N 16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված ապրանքների մատակարարում՝ 1,206,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

12) «Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2011 թվականի դեկտեմբերի 5-ին կնքված N 135/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում բենզինի գնում՝ 2,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ՝ ծրագրի կատարման մասին:



4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

"Օրրան" բարեգործական հասարակական կազմակերպության
տնօրեն Արմենուհի Հովաննիսյան

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

## «ՕՐՐԱՆ» օգնություն կարիքավոր ընտանիքներին

2014 թ.

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակները | Օգնել ֆինանսական դժվար կացության մեջ հայտնված ընտանիքների երեխաներին և ծերերին, նրանց շրջանում վերացնել մուրացկանությունը, աջակցել աղքատության մեջ գտնվող ընտանիքներին, միայնակ ու կարիքավոր ծերերին |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը, |
| 3 | Բարեգործը (բարեգործները) | ԱՄՆ-ում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն, Հովհաննիսյանների ընտանիք, Գրիգորյան բարեգործական հիմնադրամ /Անգլիա/,"OSI AF Armenia, Ցիրինկյան ընդանիք,Հակոբ Բարսեղյան |
| 4 | Ծրագրի կատարողը | «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն<br>ՀՎՀՀ 02552842<br>Առաջին Եկմալյան 6<br>Երևան, Հայաստանի Հանրապետություն<br>Հեռ.՝ 53-51-67 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Երևան<br>Սոցիալական բնագավառ |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն 113,041,834( հարյուր տասներեք միլիոն քառասունմեկ հազար ութ հարյուր երեսունչորս ) ՀՀ դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | Ծրագիրը սկսել է գործել 2000թ. ապրիլի 19-ից, 16 երեխաներով և 27 ծերերով:<br>Այժմ ծրագրում ներգրավված են.<br>• 6-16 տարեկան 105 երեխա, ովքեր ապրում են սոցիալական ծայրահեղ դժվարություններ ունեցող, մուրացկանության շեմին գտնվող ընտանիքներում: Մի շարք երեխաներ աշխատում և մուրում են փողոցում: Երեխաների մեծ մասը միակողմանի ծնողազուրկ են, հաշմանդամ, բաժանված կամ ազատազրկված ծնողներ ունեն:<br>• 50 թոշակառուներ՝ 60 և ավելի բարձր տարիքի կանայք ու տղամարդիկ, ովքեր անտուն են և մուրում են փողոցում, միայնակ են, ամուսնացած են և անժառանգ, I, II, III խմբերի հաշմանդամ են, ունեն ժառանգներ, սակայն լրացուցիչ աջակցության խիստ կարիք ունեն: |



| | | |
|---|---|---|
| | | Շահառուների ընտրությունը կատարում է սոցիալական աշխատողը՝ նախապես մշակված չափանիշներով: Յուրաքանչյուր դեպք քննարկվում է Օրրանի մասնագիտական խմբում, որի մեջ մտնում են Օրրանի սոցիալական աշխատողը, մանկավարժները, հոգեբանը, բժիշկը եւ գործադիր տնօրենը: Շահառուների ընտրության հարցում Օրրանը համագործակցում է "ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն", Երևանի տարբեր վարչական շրջաններ սոցիալական բաժինների, սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաեւ « ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչություն » հետ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը սկսվել է 2000թ. ապրիլին և այն շարունակական է: Սույն ծրագիրը նախատեսված է 2014թ. հունվարի 1-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար: Այն կգործի այնքան ժամանակ, որքան կազմակերպությունը հնարավորություն կունենա իրագործել իր առաքելությունը և այդ նպատակով կունենա ֆինանսական միջոցներ: |
| 9 | Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Օրրան ԲՀԿ-ն Առաջին Եկմալյան 6 հասցեում գտնվող իր եռահարկ կենտրոնում մուրացիկ, թափառաշրջիկ եւ ծայրահեղ կարիքավոր ընտանիքների 105 երեխայի շաբաթը 6 օր մատուցում է տաք ճաշ եւ իրականացնում սոցիալական, կրթական, մշակութային, հոգեբանական եւ բժշկական ծառայություն:<br>Շաբաթը 6 օր Օրրանը տաք նախաճաշ է մատուցում 50 միայնակ, կարիքավոր ծերերի եւ հաշմանդամների:<br>• 105 երեխայի և 50 թոշակառուի ամենօրյա սնունդ- տարեկան կազմում է 35,207,927 դրամ<br>• բժշկական և հոգեբանական ծառայություններ - տարեկան 1,462,528 դրամ<br>• սոցիալական ծառայություն, հագուստ և կոշիկ - տարեկան 5,108,366 դրամ<br>• մշակութային միջոցառումներ - տարեկան 10,543,152 դրամ<br>• դպրոցահասակ երեխաների տնային պարապմունքների կազմակերպում դպրոցից հետո շաբաթական 6 օր 105 երեխայի համար, գրենական պիտույքների, ուսումնական նյութերի, պայուսակների ապահովում, և ձեռարվեստական հինգ կենտրոներում ուսուցում (Փայտամշակում, մակրամե, կավագործություն,նկարչության, բացիկների պատրաստում)- տարեկան 17,988,064 դրամ<br>• արտասահմանից բեռների ներմուծում (բարերարների ցանկությամբ ուղարկված հագուստ, գրենական պիտույքներ, խաղալիք, սպորտային ապրանք)– տարեկան 4,000,000 դրամ<br>• նվիրատվություն.<br>- ծայրաստիճան կարիքավոր 60 ընտանիքների էլեկտրաէներգիայի և 3 ընտանիքների բնակարանի վարձի վճարում- տարեկան 5,220,000 դրամ,<br>- 76 երեխաների ամենօրյա երթևեկության ծախսեր- տարեկան 9,984,000 դրամ,<br>- 8 սաների՝ ըստ նախասիրության (երաժշտություն, արհեստներ,շախմատ և այլ) ուսման |

Ընդամենը 90,744,036 դրամ (իննսուն միլիոն յոթ հարյուր քառասունչորս հազար երեսունվեց դրամ )

| | | N | Ամսաթիվ | Պայմանագրի կամ հաշիվ ապրանքագրի համարը | Կազմակերպության կամ մատակարարի անվանումը | Նկարագրությունը | ՀՀ դրամ տարեկան առանց ԱԱՀ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | Ձեռք բերվելիք (ներմուծվող) ապրանքներ, ծառայություն-ների և աշխատանք-ների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | 1 | 17.06.04 | N010309530 51/3162/4682 | «ԱրմենՏել» ՀՁ ՓԲԸ | Հեռախոս. կապի մատակարարում | 1,500,000 |
| | | 2 | 12.07.06 | N 07-0012-6-1 | Երևանի «Ջրմուղ Կոյուղի» | Խմելու ջրի մատակարարում | 150,000 |
| | | 3 | 14.08.08 | N-263135 | " Հայաստանի էլեկտրական ցանցեր" ՓԲԸ | էլեկտրա էներգիայի մատակարարո | 1,540,000 |
| | | 4 | | | ԱՁ «Խաչատուր Շահինյան» | Հացի գնում | 3,000,000 |
| | | 5 | 07.04.2013 | Պայմանագիր N Ա 012.08.13.0546, առ 07.04.2013 | «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ | Գազի մատակարարում | 3,200,000 |
| | | 6 | | | | Արտասահմանից բեռների ներմուծում | 4,000,000 |
| | | 7 | 11.12.13 | Պայմանագիր Ե-243 | "Էյ-Ի-Ջի-Սերվիս" ՍՊԸ | Գազի սարքավորումների տեխնիկական սպասարկում | 69,718 |
| | | 8 | 29.04.2013 | Աուդիտորական ծառայություններ ի մատուցման պայմանագիր N AT-AU-024-13 | "Գրանթ Թորնթոն" ՓԲԸ | Տարեկան ֆինանսական աուդիտ | 1,500,000 |
| | | 9 | 23.12.08 | պայմանագիր առ 23.12.08, հավելված 4 առ 12.12.12 | "ՍԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | Մթերք | 20,000,00 0 |
| | | 10 | 06.12.13 | Պայմանագիր N1-12/13 | "Վալենսիա" ՀՁ ՍՊԸ | Երեխաների այցելություն Ջրաշխարհ ( 80 եր*5000դր) | 400,000 |



| | | N | Ամսաթիվ | Պայմանագրի կամ հաշիվ ապրանքագրի համարը | Կազմակերպության կամ մատակարարի անվանումը | Նկարագրությունը | ՀՀ դրամ տարեկան առանց ԱԱՀ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 11 | | | "Ռիպա" առողջարան ՍՊԸ | Երեխաների հանգիստ "Ռիպա" առողջարանում (70եր*7 օր*8000 դր) | 3,360,000 |
| | | 12 | 10.12.2012 | Պայմանագիր N3410 առ10.12.2012 | «Տեխնիկական անվտանգություն ազգային կենտրոն»ՊՈԱԿ | Գազի կաթսային տեխնիկական զննում | 33,830 |
| | | 13 | 16.12.10 | 74556 | "Դ-Տելեկոմ" ՓԲԸ | Հեռախոս. կապի մատակարարում | 1,200,000 |
| | | 14 | 12.12.11 | 16 | "Դարոյնք" ՍՊԸ | Թխվածքաբլիթ, վաֆլի | 1,206,000 |
| | | 15 | | | «Ազատագիր» ՍՊԸ | Դպրոցական գրենական պիթույք | 2,854,000 |
| | | 16 | 05.12.11 | 135/11 | "Ֆլեշ"ՍՊԸ | Բենզինի գնում | 2,500,000 |
| | | 17 | | | Արմենիա Հյուրանոցային Համալիր ՓԲԸ | միջնցառում դրամական միջոցների հայթայթման նպատակով | 3,200,000 |
| | | | | Ընդամենը | | | 50,273,548 |
| | | Ներմուծումներ` բարերարների կողմից ուղարկվող նվերներ, հիմնականում մանկական հագուստ եւ դպրոցական պիտույքներ: | | | | | |

| | | |
|---|---|---|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր | Կենցաղային ծախսեր` պայմանագրեր «ՀայՌուսգազարդ»-ի, «ԱրմենՏել»-ի, "Դ-Տելեկոմ" ՓԲԸ ,«Հայաստանի էլեկտրական Ցանցեր», Երևանի «Ջրմուղ Կոյուղի» ընկերությունների հետ:<br>• գազ-տարեկան` 3,200,000 դրամ<br>• գազի սարքավորումների տեխնիկական սպասարկում- 01.01.14-31.12.14, - 69,718 դրամ<br>• տեխնիկական անվտանգություն -33830 դրամ<br>• ջուր` 150,000 դրամ<br>• էլեկտրաէներգիա` 1,540,000 դրամ<br>• հեռախոս` 2,700,000 դրամ<br>• գույքահարկ շենքի և մեքենայի համար 816,000 դրամ<br>• գրասենյակային ծախսեր 775,000դրամ<br>• ֆինանսական աուդիտ «Գրանթ Թորնթոն Ամիօ» ՍՊԸ-ի կողմից 1,500,000 դրամ<br>• փոստային ծախսեր 120,000 դրամ<br>• բենզինի ծախսեր-2,500,000 դրամ<br>• անվադողերի ծեռքբերում – 150,000 դրամ<br>• «Արմենիա» հյուրանոցային համալիր» ՓԲԸ միջոցառում դրամական միջոցների |

| | | |
|---|---|---|
| | | [illegible]-3,200,000 դրամ<br>Ընդամենը 22,297,798 (քսաներկու միլիոն երկու հարյուր իննսունյոթ հազար յոթ հարյուր իննսունութ դրամ) |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ | 1.ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով<br>2.ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>3.ՀՀ առողջապահության նախարարություն<br>4.ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>5.Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանների սոցիալական վարչություններ<br>6.Տեղական ու միջազգային ՀԿ-ներ, որոնք աշխատում են ռիսկի խմբի երեխաների հետ<br>7. ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչություն<br>«Օրրանը» համագործակցում է նաև սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ԶԼՄ-ների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • եռամսյակային և տարեկան հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողով<br>• ամսեկան եւ եռամսյակային աշխատանքային ու ֆինանսական հաշվետվություններ են ներկայացվում «Օրրան» ԲՀԿ-ի տնօրենների խորհրդին<br>• գույքագրումը և բաշխումն իրականացվում են «Օրրան» ԲՀԿ –ի գործադիր տնօրենի, հաշվապահի և սոցիալական աշխատողի, ինչպես նաև շահառուների ստորագրություններով ու անձնագրային տվյալներով<br>• եռամսյակային հաշվետվություններ ՀՀ կառավարությանն առընթեր Պետական Եկամուտների Կոմիտե<br>• ֆինանսական աուդիտն իրականացվում է «Գրանթ Թորնթոն Ամիօ» ՍՊԸ-ի կողմից |

Ծրագրի ղեկավար Արմենուհի Հովաննիսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 հունվարի 2014 թվականի N Մ- 030 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՕՐՐԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 17-ի N 3.8-2/408-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 22-ի N ՎՄ/3-4/602-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել բելգիահայ բարերար Մակար Գրիգորյանի կողմից որպես նվիրատվություն «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով՝ Երևանի (100 սեղան և աթոռ) և Վանաձորի (80 սեղան և աթոռ) կենտրոնների դասարանները կահավորելու նպատակով Բելգիայից ստացված բեռի՝ (180 դպրոցական սեղան և 180 աթոռ, 3,300 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, 6,300 կգ ընդհանուր քաշով, «Արարատյան» Տ/Մ) ներմուծման ծրագիրը:

2. «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 հունվարի 2014 թվականի N Մ- 031 -Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 13-ի N 3.1/3.8-2/195-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի հունվարի 13-ի N 04/07-1/170-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 17-ի N ՎՄ/3-4/339-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի կողմից հատկացված գումարներով գնված՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի՝ ռադիոֆիզիկական և ֆիզիկական սարքեր (18 տեղ, 110 կգ ընդհանուր քաշով, 15,123.55 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» Մ/Տ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 հունվարի 2014 թվականի N Մ- 032-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի N Մ-712-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 17-ի N 3.8-2/413-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 21-ի N ՎՄ/3-4/538-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կենսաբանության ֆակուլտետի համար Նորվեգիայի Բերգենի համալսարանից՝ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ձեռք բերված բեռը՝ «5424R» մակնիշի ցենտրիֆուգ իր բաղադրամասերով (1 տեղ, 24.8 կգ ընդհանուր քաշով, 45,608 նորվեգական կրոնին համարժեք դրամ,փոխադրման ծախսերը կազմել են 1,838 նորվեգական կրոն, ՄՓ և ՍԱՓԱՄ Մ/Տ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի օգոստոսի 31-ի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի և Նորվեգիայի Բերգենի համալսարանի կենսաբանության ֆակուլտետի, մանրէների էկոլոգիայի բնագավառում համագործակցություն» ծրագրի մասին» N Մ-712-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**24 հունվարի 2014 թվականի N Մ- 033 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N 3/3.8-2/20183-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N ԴԴ/22/14264-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի 25-ի N ՎՄ/3-4/16284-13 եզրակացու-թյունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Ֆրանսիայից ստացված բեռը (դեղորայք՝ 2 արկղ, 45 կգ ընդհանուր քաշով, 881.66 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 256.89 եվրո, ցանկը կցվում է. «Զվարթնոց» Մ/S ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

***Ստացվող բեռի ցանկ***

***համաձայն N 118808, 119026 հվ-ապրանքագրերի***

| Նօ | Անվանում | Քանակ | Գին/Եվրո |
|---|---|---|---|
| 1 | Պարա-ամինոցալիցիլային թթու (PAS), 4գ, գրանուլներ պարկերում | 240 | 381.28 |
| 2 | Ջերմամեկուսիչ արկղ 16,216 dm3 | 1 | 126.45 |
| 3 | Օֆլոքսացին ցանքսի համար, 1գ, փոշի, սրվակ | 1 | 56.22 |
| 4 | Կապրեոմիցինի սուլֆատ, 1գ, փոշի անպիրիկոգրամի համար | 1 | 207.51 |
| 5 | Ջերմամեկուսիչ արկղ 15, 81 dm3 | 1 | 110.20 |
| Ընդամենը | | | 881.66 |

ԱՍՈՑԻԱՑԻԱ «ՄԵԴԵՍԵՆ ՍԱՆ ՖՐՈՆՏԻԵՐ» / ASSOCIATION «MEDECINS SANS FRONTIERES» M.S.F. FILIALE D'ARMENIE N4 ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ 01538594

0/12.10

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 հունվարի 2014 թվականի N Մ- 034 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ) (1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկըեմբերի 27-ի N 3/3.8-2/20528-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունվարի 10-ի N ԴԴ/22/50-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 28-ի N ՎՄ/3-4/16529-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Ֆրանսիայից ստացված բեռը (դեղորայք, բուժ. պարագաներ և վիտամինացված սնունդ՝ 287 արկղ, 4840 կգ ընդհանուր քաշով, 42,564.26 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 12,458.5 եվրո, ցանկը կցվում է, «Արարատյամ» Տ/Մ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

0/12.11

[illegible]
[illegible] 18996
[illegible]

| Նo | Անվանում | Քանակ | Գին/Եվրո |
|---|---|---|---|
| 1 | Դոզավորող պոմպ, 20մլ ,5լ-ից տարայի համար | 12 | 1.00 |
| 2 | Պոլիվիդոն յոդ, վիրաբուժական սկրաբ, 4% լուծույթ, 125մլ, շիշ | 320 | 441.60 |
| 3 | Պոլիվիդոն յոդ, 10% լուծույթ, 200մլ, շիշ կաթոցիչով | 31 | 33.17 |
| 4 | Հեպարին նատրիում, 5000 ՄՄ/մլ, 5 մլ, սրվակ | 80 | 163.36 |
| 5 | Դիկլոֆենակ , 25մգ/մլ, 3մլ, ամպուլա | 30 | 4.87 |
| 6 | Լիդոկային 2%, 20մլ սրվակ | 40 | 33.16 |
| 7 | Նատրիումի քլորիդ, 0.9%, 10 մլ, ամպուլ | 9500 | 1012.70 |
| 8 | Օմեպրազոլ, 20մգ, դեղապատիճ | 2002 | 110.11 |
| 9 | Իզոնիազիդ, 300մգ, դհտ., բլիստեր | 300 | 9.27 |
| 10 | Երկաթի ֆումարատ 185 մգ (60մգ)/ ֆոլաթթու 0.4 մգ, դհտ | 900 | 13.05 |
| 11 | Թիամին (վիտամին B1), 50 մգ, դհտ | 500 | 21.05 |
| 12 | Պիրիդոքսին (վիտամին B6), 10 մգ, դհտ. | 70000 | 382.20 |
| 13 | Ֆլյուկոնազոլ, 200մգ, դհտ | 300 | 14.04 |
| 14 | Պարոքսետին, 20մգ, կիսվող դհտ. | 270 | 26.64 |
| 15 | Խոլեկալցիֆերոլ, (վիտամին D3), 10 000ՄՄ/1մլ, լուծույթ, 10 մլ, շիշ | 40 | 88.80 |
| 16 | Սալբուտամոլ, 4մգ, դհտ. | 1000 | 22.56 |
| 17 | Ֆոլաթթու 5 մգ, դհտ | 2000 | 8.48 |
| 18 | Կլարիտրոմիցին, 500մգ, դհտ. | 224 | 65.44 |
| 19 | Պարացետամոլ (ացետամինոֆեն), 100մգ, դհտ | 1000 | 2.91 |
| 20 | Մուլտիվիտամին, դհտ. | 10000 | 72.34 |
| 21 | Սալբուտամոլ, 200 շունչ, 0.1մգ/շունչ, աէրոզոլ | 125 | 148.75 |
| 22 | Պրոմեթազինի հիդրոքլորիդ, 25մգ, դհտ. | 2000 | 31.90 |
| 23 | Ամիտրիպտիլին, 25մգ, դհտ. | 1000 | 6.57 |
| 24 | Ֆլյուկոնազոլ, 50մգ, դեղապատիճ | 300 | 18.21 |
| 25 | Ալյումինե հիդրօքսիդ, 400մգ/մագնեզիումի հիդրօքսիդ, 400մգ, դհտ. | 1000 | 20.80 |
| 26 | Ռիֆամպիցին, 300մգ, դդ-պտճ, բլիստեր | 6000 | 4228.80 |
| 27 | Ցիկլոսերին, 250մգ, դդ-պտճ | 800 | 443.20 |
| 28 | Լոպինավիր (LPV) 200 մգ/Ռիտոնավիր (r), 50 մգ, դհտ, ջերմակայուն | 240 | 54.34 |
| 29 | Զիդովուդին (AZT), 300 մգ/Լամիվուդին (3TC), 150 մգ, դհտ | 120 | 13.34 |
| 30 | Խալաթ, վիրաբուժական, ոչ գործվածքից, մեկանգամյա օգտագործման, մեծ | 30 | 72.00 |
| 31 | Խալաթ, վիրաբուժական, ոչ գործվածքից, մեկանգամյա օգտագործման, XXL | 5 | 12.15 |
| 32 | Ծածկոց, ստերիլ, ոչ գործվածքից, մեկանգամյա օգտագործման, 45 x 75 սմ | 30 | 7.20 |
| 33 | Խալաթ, վիրաբուժական, ոչ գործվածքից, մեկանգամյա օգտագործման, XL | 15 | 36.30 |
| 34 | Ձեռնոցներ, վիրաբուժական, լատեքսյա, միանվագ օգտ., փոշով չպատված, ստերիլ, զույգ, 7.5 | 600 | 150.00 |
| 35 | Կպչուն ժապավեն, ռուլոն, 2սմ x 5մ | 100 | 34.00 |
| 36 | Ներերակային կաթետր, ներարկվող մուտք, մեկանգամյա օգտագործման, 20G (1.0 x 32մմ), վարդագույն | 50 | 13.33 |
| 37 | Ներերակային կաթետր, ներարկվող մուտք, մեկանգամյա օգտագործման, 18G (1.2 x 45մմ), կանաչ գույն | 50 | 13.35 |
| 38 | Անձեռոցիկ, ոչ գործվածքից, 7.5սմ, 4 շերտ, ոչ ստերիլ | 1600 | 7.52 |
| 39 | Կպչուն վիրակապ, էլաստիկ, 10սմ x 3մ | 37 | 69.93 |
| 40 | Ներարկիչ, մեկ անգամյա օգտագործման, Luer, 20մլ | 200 | 11.20 |

ԱՍՈՑԻԱՑԻԱ «ԲԺԻՇԿՆԵՐ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ» MEDECINS SANS FRONTIERES N4 ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ 01538594 M.S.F. FILIALE D'ARMENIE

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 հունվարի 2014 թվականի N Մ- 035 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ) (2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 13-ի N 3.1/3.8-2/211-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունվարի 10-ի N ԴԴ/22/63-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 17-ի N ՎՄ/3-4/338-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Ֆրանսիայից ստացված բեռը (դեղորայք՝ 28 արկղ, 92 կգ ընդհանուր քաշով, 9,024.71 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 809 եվրո, ցանկը կցվում է «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլոզի և դեղորայքակայուն տուբերկուլոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

0/12.12

[redacted]

| Նo | Անվանում | Քանակ | Գին/Եվրո |
|---|---|---|---|
| 1 | Ռիֆամպիցին, 300մգ, դդ-պտճ, բլիստեր | 4000 | 2819.20 |
| 2 | Հիդրոքսիզին 25 մգ. Դիր | 375 | 31.20 |
| 3 | Ամոքսիցիլին, 875/կլավուլոնյաթթու, 125մգ, դհտ. | 1624 | 3481.16 |
| 4 | Ձեռնոցներ, վիրաբուժական, լատեքսյա, միանվագ օգտ., փոշով չպատված, ստերիլ, զույգ, 8 | 24 | 6.24 |
| 5 | Մառլյա կոմպրեսի, 10սմ, 12 շերտ, 17 կապ, ստերիլ | 4100 | 139.40 |
| 6 | Վիրակապի կոմպլեկտ, ոչ կտորից, 4 առանձին բաժիններով, ստերիլ, մեկանգամյա օգտագործման | 720 | 496.26 |
| 7 | Ասեղ GRIPPER 22G (0.7մմ), երկար. 19.0 մմ, միանգամյա օգտագործման, ստերիլ | 708 | 272.58 |
| 8 | Միակցիչ ներպատվաստված կենտրոնական կաթետրի համար, ստերիլ, միանգամյա օգտագործման | 600 | 647.16 |
| 9 | Դիկլոֆենակ , 25մգ/մլ, 3մլ, ամպուլա | 270 | 43.82 |
| 10 | Նատրիումի քլորիդ, 0.9%, 10մլ, պլաստիկ փաթեթ | 100 | 10.66 |
| 11 | (Glucometer Optium Xceed) ստրիպ | 300 | 60.03 |
| 12 | Գրիչ, ապակու վրա գրելու համար | 45 | 1017.00 |
| | Ընդամենը | | 9024.71 |

MEDECINS SANS FRONTIERES
N 4
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
01538594
M.S.F. FILIALE D'ARMENIE

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 հունվարի 2014 թվականի N Մ- 036 -Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N Մ-632-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագիր)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 13-ի N 3.1/3.8-1/213-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունվարի 10-ի N ԴԴ/22/62-14 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 10-ի N ՎՄ/3-4/107-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ու ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 28-ի «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում «Արյան անվտանգության ազգային ծրագրի շրջանակներում միջոցառումների իրականացմանը նպաստող» ծրագրի մասին» N Մ-632-Ա որոշմամբ հաստատված ենթադրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ռոմա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00045967) 2013 թվականի նոյեմբերի 26-ին կնքված N ԱԿ ՇՀԾՁԲ-13/9-1 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների մատուցում՝ 1,600,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 հունվարի 2014 թվականի N Մ- 037 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 04-Ի N Մ-911-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
(Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» (Պոլիտեխնիկ) ՊՈԱԿ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 13-ի N 3.1/3.8-1/196-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N 03/07-1/15567-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 28-ի N ՎՄ/3-4/16528-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» (Պոլիտեխնիկ) ՊՈԱԿ -ի կողմից իրականացվող «Ջրի պահպանման և անվտանգության տեխնիկական նվաճումների ներգրավումով ջրում աղտոտվածությունների հայտնաբերում և հեռացում» (նախագիծ «NATO SfP EAP.SFPP 984403») ծրագրի մասին» N Մ-1130-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է);

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաասնի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

Հաստատված է
ՀՊՃՀ ռեկտոր
Ա. Ավետիսյանի կողմից
................... 2013թ.

NATO-ի հետազոտությունները հանուն խաղաղության (Science for Peace – SfP) ծրագրի շրջանակում Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (ՀՊՃՀ) մասնագետների կողմից Հայաստանում իրականացվող « Ջրի պահպանման և անվտանգության տեխնիկական նվաճումների ներգրավում. նրանում աղտոտվածությունների հայտնաբերում և հեռացում» (նախագիծ NATO SfP EAP. SFPP 984403)

**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագիրն ուղղված է ջրերի աղտոտվածության և մաքրման հնարավորությունների հետազոտմանը, առաջադեմ գիտության հնարավորություններով կենսական անհրաժեշտության ջրային օբյեկտներում բարդ համակարգային ռազմավարական հսկողության իրականացման կոմպլեքս եղանակների մշակմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | NATO-ի հետազոտությունները հանուն խաղաղության (Science for Peace – SfP) ծրագր: NATO HQ Bd Leopold III B-1110 Բրյուսել, Բելգիա, ֆակս/էլեկտրոնային հասցե՝ +32(0) 2 707 4420 / +32(0) 2 707 5228<br>SPS Projects Office<br>Dr. Eyup Turmus<br>Mrs. Jane Bradbrooke<br>mbx.spsprojects@nhaqto.int |
| 4. | Ծրագիրը կատարողը | NATO SfP EAP. SFPP 984403 Նախագծին մասնակցում են 5 երկրների մասնագետներ՝ Մոլդովայից, Սլովակիայից, Հունաստանից, Միացյալ նահանգներից և **Հայաստանից:** Հայաստանյան կողմից նախագիծն իրականացնում է ՀՀ Կրթության և Գիտության նախարարությունը, Հայաստանի Պետական Ճարտարագիտական համալսարան (ՀՊՃՀ) պետական ոչ առևտրային կազմակերպությունը (ՊՈԱԿ): Իրականացնող խմբի ղեկավարը և ծրագրի համանախագահն է հանդիսանում **Սուրիկ Խուդավերդյանը**, դոկտոր, պրոֆեսոր, ամբիոնի վարիչ:Հայաստանի Պետական ճարտարագիտական համալսարան:Հայաստան, Երևան:Տերյան 105, 0009: Հեռախոս/ֆակս/էլեկտրոնային հասցե՝+37410 541-591/ +37410 541-591/ khsuren@seua.am: |

1/14

| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ք. Երևան, ՀՊՃՀ , Գիտական: Աշխատանքն իրականացվելու է ՀՊՃՀ – ում, Արարատի, Սյունիքի, Գեղարքունիքի մարզերում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Հայաստանյան մասնաբաժինը՝ 90000 եվրոյին համարժեք դրամ է:<br>Ըստ տարիների բաշխվում է՝ 2013/14թ.թ. - 26000 եվրոյին համարժեք դրամ, 2014/15թ.թ. – 32000 եվրոյին համարժեք դրամ, 2015/16թ.թ. – 32000 եվրոյին համարժեք դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Կրթության և Գիտության նախարարությունը, ՀՊՃՀ «Ֆոտոէլեկտրոնային սարքեր կապի օպտիկական համակարգում» բազային գիտահետազոտական լաբորատորիան |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 սեպտեմբերի – 2013թ. – 20 ապրիլի 2016թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | (see below) |

9\. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը

1. Իրականացնել տեսական, գործնական և տեխնոլոգիական մշակումներ սենսորային զարգացումների և մոնիտորինգի համակարգերի վերաբերյալ, որոնք ուղված են քիմիական, կենսաբանական, օպտիկական և ռադիացիոն հնարավորություններով ջրում վնասակար նյութերի հայտնաբերմանը և վերացմանը:
2. Բացահայտել տեղեկատվության կոմպլեքս մշակման ալգորիթմներ, ինչը թույլ կտա իրականացնել բարդ համակարգային հսկողություն կենսական անհրաժեշտության ջրային օբյեկտներում:
3. Դիտարկել ջրային ռեսուրսների նկատմամբ ահաբեկչության և տարերային աղետների դեմ պայքարի հնարավորություններ:
4. Ուշադրություն դարձնել գիտնականների, տեխնոլոգների, ճարտարագետների, համագործակցությանը, որը թույլ կտա առաջադեմ գիտության հնարավորություններով ջրի մաքրության պահպանման համար պայքարում կոմպլեքս եղանակներ մշակել ոչ ավանդական մարտահրավերներին դիմակայելու համար:
5. Իրականացնել ջրում աղտոտվածությունների հայտնաբերում և մշակված եղանակներով հեռացում:

Ծրագրի իրականացման ժամանակահատվածում նախատեսվում է՝

Ներգրել գիտահետազոտական սարքավորումներ և նյութեր՝

- ջրի անալիզի,
- ջրում վնասակար նյութերի հայտնաբերման,
- տեղեկատվությունը արբանյակային կապով տեղափոխման,
- տվյալների հեռամշակման,
- աղտոտվածությունների վերացման,
- ջրի վիճակի մշտական մոնիտորինգի և
- արտակարգ իրավիճակներին արագ արձագանքման համար:



Ծրագրով նախատեսվող միջոցառումների ժամկետները հետևյալն են՝

- ջրի անալիզի նպատակով գիտահետազոտական սարքավորումների և նյութերի ներգրում - 2013/16թ.թ.,
- ջրում վնասակար նյութերի հայտնաբերում, ջրի հեռամոնիտորինգի համակարգի մշակում - 2013/15թ.թ.,
- ջրի հեռամոնիտորինգի համակարգի մակետի ստեղծում - 2014/15թ.թ.,
- տվյալների հեռամշակման ծրագրի մշակում - 2014/15թ.թ.,
- աղտոտվածությունների վերացման եղանակների փորձարկում, վերացման իրականացում - 2015/16թ.թ.,
- ջրի վիճակի մշտական մոնիտորինգի համակարգի փորձարկում, մոնիտորինգի իրականացում - 2015/16թ.թ.,

Ֆինանսավորումն ըստ տարիների (EUR)՝

| № | Գործառույթ | 2013-2016թ.թ. | 2013-2014թ.թ. | 2014-2015թ.թ. | 2015-2016թ.թ. | Հարկերից ազատում |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Սարքավորումներ | 40000 | 9000 | 17500 | 13500 | այո |
| 2 | Համակարգիչներ և ծրագրային ապահովածություն | 10000 | 3000 | 3500 | 3500 | այո |
| 3 | Վերապատրաստում | 5000 | 2400 | 0 | 2600 | այո |
| 4 | Գործուղում | 5000 | 1600 | 1000 | 2400 | այո |
| 4 | Ծախսվող նյութեր | 12000 | 4000 | 4000 | 4000 | այո |
| 5 | Կրթաթոշակ երիտասարդ մասնագետներին | 18000 | 6000 | 6000 | 6000 | այո |
| **6** | **Ընդամենը՝** | **90000** | **26000** | **32000** | **32000** | |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 01. սեպտեմբերի. 2013թ. – 20 ապրիլի 2016թ. ժամանակահատվածում ձեռք բերվող ապրանքների ընդհանուր արժեքը ըստ տարատեսակների՝ սարքավորումներինը՝ 40000 Եվրո – ին համարժեք դրամ է: Համակարգիչներինը և ծրագրային ապահովածությանը՝ 10000 Եվրո – ին համարժեք դրամ է: Ծախսվող նյութերինը՝ 12000 Եվրո – ին համարժեք դրամ է: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չկան |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների | Ծրագրի իրականացման շրջանակում NATO-ն համագործակցում է ՀՀ Կրթ. Գիտ. նախարարության, «Հայաստանի Պետական ճարտարագիտական համալսարանի», «Երևանի |

| | | |
|---|---|---|
| | հետ | պետական համալսարանի», ՀԱԱ «Մոլեկուլային կենսաբանության» ինստիտուտի և «Էկոնոմիկայի» նախարարության «Պլաստպոլիմեր» ինստիտուտի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | NATO-ին և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ուղղված գիտական և ֆինանսական ամփոփ հաշվետվություն, գիտական նյութերի հրապարակում |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 հունվարի 2014 թվականի N Մ - 038 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ- 774 - Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (N1)**
**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 13-ի N 3.1/3.8-2/202-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 20-ի N ՎՄ/3-4/483-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից ձեռք բերված բեռը (15 տեղ, 21,875 կգ ընդհանուր քաշով, 6,825.42 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, որից՝ 4,400 ԱՄՆ-ի դոլար կազմել են փոխադրման ծախսերը, Արարատյան ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավետիսյան դպրոցի կառուցում» ծրագրի մասին» N Մ-774-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**հունվարի 2014 թվականի N Մ - 039 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ- 774 - Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (N2)**
**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 14-ի N 3.1/3.8-2/240-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 20-ի N ՎՄ/3-4/484-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից ձեռք բերված բեռը (16 տեղ, 21,468 կգ ընդհանուր քաշով, 12,881.88 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, որից 1,200 ԱՄՆ-ի դոլար կազմել են փոխադրման ծախսերը, Արարատյան ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավետիսյան դպրոցի կառուցում» ծրագրի մասին» N Մ-774-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 հունվարի 2014 թվականի N Մ- 040 - Ա**
**քաղ. Երևան**
(որոշումն ընդունվել է 2014 թվականի հունվարի 24-ին)

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԻԶՄԻՐԼՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-ի ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N 3/3.8-1/20362-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N 02/7923-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N ՎՄ/3-4/16286-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 38,395,750 դրամ արժողությամբ «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կարիտաս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03301484) 2013 թվականի մայիսի 25-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լամինատե կահույքի պատրաստման, տեղափոխման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 38,395.750 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ
ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«30» հունվարի 2014 թ.

Իզմիրլյան ԲԿ կահավորման

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կատարել Իզմիրլյան ԲԿ կահավորման աշխատանքներ : |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, ՀՎՀՀ.04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին. Առողջապահական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 38,395,750 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հիվանդանոցը և հիվանդները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 31 մայիսի 2013թ. – 01 փետրվարի 2014թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կահավորել Իզմիրլյան ԲԿ՝ 38,395,750 ՀՀ դրամ գումարով: Աշխատանքերն իրականացվում է՝ <<Կարիտաս>> ՍՊԸ-ի (ՀՀ, ք. Երևան, Աշտարակի խճուղի 2Ա, ՀՎՀՀ 03301484) կողմից, պայմանագիր՝ կնքված 31.05.2013թ,՝ 38,395,750 ՀՀ դրամ գումարով,: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է կատարել իզմիրլյան ԲԿ կահավորման աշխատանքներ, (կահույքի ապրանքացուցակը տես պայմանագրում առկա թիվ 1 հավելվածում) 38,395,750 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չի նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի և ՀՀ Առողջապահության նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**31 հունվարի 2014 թվականի N Մ- 041 - Ա**
**քաղ. Երևան**
(որոշումն ընդունվել է 2014 թվականի հունվարի 24-ին)

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՉԵ ԵՎ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐ» ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 3/3.8-1/20321-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N 02/7922-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N ՎՄ/3-4/16292-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 2,500,000 դրամ արժողությամբ «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2013 թվականի հունիսի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է չժանգոտվող պողպատե կարկասով ապակյա երեսպատված սեղանների պատրաստում և տեղադրում՝ 2,500.000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ

ՍՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

«30» հունվարի 2014 թ.

<<Վաչե և Թամար Մանուկյաններ>> մատենադարանի կահավորման

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կահավորել <<Վաչե և Թամար Մանուկյաններ>> մատենադարանը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուր էջմիածին, կրթական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 2,500,000 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հավատացյալ ժողովուրդը և աշխատակազմը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 հունիսի 2013թ. – 01 փետրվարի 2014թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է պատրաստել և տեղադրել չժանգոտվող պողպատե կարկասով ապակյա երեսպատված 6 հատ սեղան յուրաքանչյուրը 416,700 դրամ գումարով: Ընդհ. 2,500,000 ՀՀ դրամ: Աշխատանքներն իրականացվում է՝. <<Պրոֆ Ալ>> ՍՊԸ-ի (ՀՀ, ք. Երևան, Մ. Մեծարենց 88ա, ՀՎՀՀ 01831375) կողմից, պայմանագիր՝ կնքված 01.06.2013թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է պատրաստել և տեղադրել չժանգոտվող պողպատե լարկասով ապակյա երեսպատված 6 հատ սեղան, յուրաքանչյուրը 416,700 դրամ գումարով: Ընդհանուր՝ 2,500,000 ՀՀ գումար: 01 հունիսի 2013թ.- 01 փետրվարի 2014թ.: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չի նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |